ԾԱՆՈՒՑՈՒՄ ՆԵՐԴՐՈՂՆԵՐԻՆ

NOTICE TO INVESTORS

Թողարկող	Եվրասիական զարգացման բանկ (այսուհետ՝ նաև «Բանկ» կամ «ԵԱԶԲ»)
Issuer	Eurasian Development Bank (also the "Bank" or "EDB")
Թողարկողի միջազգային վարկային վարկանիշ	ԲԲԲ-՝ ըստ Ստանդարտ և Փուրզի
Issuer International Credit Rating	BBB- by Standard & Poor's
Արժեթղթերի տեսակ	ֆիքսված տոկոսադրույքով անվանական արժեկտրոնային, ոչ ստորադաս, չապահովված պարտատոմսեր (այսուհետ՝ «Պարտատոմսեր», ինչպիսի սահմանումը վերաբերում է ստորև ներկայացված հատկանիշներին համապատասխանող և սույն փաստաթղթի հիման վրա թողարկված պարտատոմսերին)
Type of Securities	nominal coupon paying, fixed rate, senior, unsecured bonds (the "Bonds", which definition shall relate to the bonds with the below characteristics and issued under this document)
Արժեթղթեր ձև	Ոչ փաստաթղթային
Form of Securities	Book entry
Անվանական արժեք	1,000 (մեկ հազար) ԱՄՆ դոլար
Denomination	USD 1,000 (one thousand)
Թողարկված Պարտատոմսերի քանակ	30,000 (երեսուն հազար)
Number of Bonds Issued	30,000 (thirty thousand)
Պարտատոմսերի ընդհանուր անվանական արժեք	30,000,000 (երեսուն միլիոն) ԱՄՆ դոլար
Aggregate Principal Amount of Bonds	USD 30,000,000 (thirty million)

Թողարկման և տեղաբաշխման ժամանակահատված	2023 թվականի օգոստոսի 15-ից 2023 թվականի սեպտեմբերի 15-ը (հաշվի առնելով Առաջարկի իրականացման ավարտի կանոնները)
Issue and Placement Period	August 15, 2023 – September 15, 2023 (subject to the rules on the Ending Date of Offer)
Առաջարկի իրականացման սկիզբը	Օգոստոսի 15, 2023 թվական
Starting Date of Offer	August 15, 2023
Առաջարկի իրականացման ավարտը (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Նախապես որոշված ժամկետ՝ Օգոստոսի 31, 2023 Փոփոխված ժամկետ՝ Սեպտեմբերի 15, 2023 Եթե Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվում են մինչ այդ ամսաթիվը, ապա առաջարկի իրականացման ավարտի օր է համարվում այն օրը, երբ տեղաբաշվել է վերջին Պարտատոմսը:
Ending Date of Offer (including any possible changes to the deadline)	Predetermined date: August 31, 2023 Modified date: September 15, 2023 If the Bonds are entirely placed prior to this date the Ending Date of Offer shall be the date when the last Bond is placed.
Ժամկետ	3 (երեք) տարի
Tenor	3 (three) years
Մարման ամսաթիվ	Օգոստոսի 15, 2026 թվական
Maturity Date	August 15, 2026
Առաջատար կազմակերպիչ և Տեղաբաշխող	«Արդշինբանկ» ՓԲԸ
Lead Arranger & Underwriter	Ardshinbank CJSC

ԿԱՐԵՎՈՐ ԾԱՆՈՒՑՈՒՄ	**IMPORTANT NOTICE**

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԲԱՆԿԸ ԶԳՈՒՇԱՑՆՈՒՄ Է, ՈՐ ՍՈՒՅՆ ՓԱՍՏԱԹՂԹՈՒՄ ՉՆԵՐԱՌՎԱԾ՝ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԹՈՂԱՐԿՄԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՄԲՈՂՋ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ (ՆԵՐԱՌՅԱԼ՝ ԵԱԶԲ-Ի ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԱՅԼՆ) ՀԱՍԱՆԵԼԻ ՉԷ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎՈՎ, ԵՎ ԵԹԵ ՆՄԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԷԱԿԱՆ Է ՆԵՐԴՐՈՂԻ ՀԱՄԱՐ՝ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄ ԿԱՅԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑՈՒՄ, ՆԵՐԱՌՅԱԼ՝ ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ՌԻՍԿԵՐԻ ՄԱՍԻՆ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ, ՆԵՐԴՐՈՂԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ Է ՏՐՎՈՒՄ ՁԵՌՆՊԱՀ ՄՆԱԼ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐՈՒՄ ՆԵՐԴՐՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒՑ:	**THE EURASIAN DEVELOPMENT BANK WARNS THAT ALL THE INFORMATION WITH REGARD TO THE BOND ISSUANCE WHICH IS NOT CONTAINED IN THIS NOTICE TO INVESTORS (INCLUDING EDB'S ANNUAL AND FINANCIAL REPORTS, ETC.) IS NOT AVAILABLE IN ARMENIAN, AND IN CASE SUCH NON-AVAILIBILITY IS ESSENTIAL FOR THE INVESTOR IN TERMS OF MAKING THE INVESTMENT DECISION, INCLUDING THE COMPLETE UNDERSTANDING OF ALL RISKS ASSOCIATED WITH THE OFFERING AND INVESTMENT IN THE BONDS, IT IS ADVISED TO THE INVESTOR TO REFRAIN FROM INVESTING IN THE BONDS.**
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ	**CHANGE OF INFORMATION**
Սույն փաստաթղթում ներառված կամ այլ կերպ հանրությանը բացահայտված՝ Պարտատոմսերին վերաբերող տեղեկատվության բոլոր հետագա փոփոխությունները կբացահայտվեն «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի կիրառելի կանոններին համապատասխան:	Any further changes to the information in relation to the Bonds (contained hereunder or otherwise disclosed to the public) will be disclosed in accordance with applicable rules of Armenia Securities Exchange OJSC.
ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ	**FORWARD-LOOKING STATEMENTS**
Սույն փաստաթղթում ներառված որոշ դրույթներ հանդիսանում են կանխատեսումներ, որոնք լի են մի շարք	Certain statements included herein may constitute forward-looking statements that involve a number of risks and uncertainties.

ռիսկերով և անորոշություններով: Նման կանխատեսումները արտահայտվում են հետևյալ տերմինաբանության օգտագործմամբ՝ «գնահատում է», «կարծում է», «ակնկալում է», «կարող է», «ակնկալվում է, որ», «մտադիր է», «պետք է», «պետք է շարունակ(վ)ի», «կլինի (կլինեն)», «ձգտում է», «մոտավորապես», «կանխատես(վ)ում է», կամ նմանատիպ արտահայտությունների (բառերի) կամ դրանց ժխտական ձևերի կամ ձևափոխված տարբերակների կամ համեմատելի տերմինաբանության օգտագործմամբ կամ ռազմավարության, նպատակների կամ մտադրությունների քննարկմամբ: Այդպիսի կանխատեսումները կախված են ենթադրություններից, տվյալներից և մեթոդներից, որոնք կարող են լինել ոչ ճիշտ կամ ոչ ճշգրիտ և որոնք կարող են չիրականանալ: Հանգամանքները, որոնք կարող են ազդել այդպիսի կանխատեսումների վրա, ներառում են, ի թիվս այլնի, ընդհանուր տնտեսական և բիզնես պայմանները, ԵԱՁԲ-ի ծառայությունների նկատմամբ պահանջարկը, մրցակցային հանգամանքները, պետական կարգավորման փոփոխությունները, հարկային կարգավորումների փոփոխությունները (ներառյալ՝ հարկերի դրույքաչափերի փոփոխությունները, նոր հարկային օրենքները և հարկային օրենքների վերանայված մեկնաբանությունները), դատական և արբիտրաժային գործընթացների արդյունքները, տոկոսադրույքների և փոխարժեքների տատանումները և այլ շուկայական պայմանները, միջազգային շուկաներում տնտեսական և քաղաքական	Such forward-looking statements can be identified by the use of forward-looking terminology such as “estimates”, “believes”, “expects”, “may”, “are expected to”, “intends”, “will”, “will continue”, “should”, “would be”, “seeks”, “approximately”, or “anticipates”, or similar expressions or the negative or other variations thereof or comparable terminology, or by discussions of strategy, plans or intentions. Such forward-looking statements are necessarily dependent on assumptions, data or methods that may be incorrect or imprecise and that may be incapable of being realised. Factors that might affect such forward-looking statements include, among other things, overall economic and business conditions; the demand for EDB’s services; competitive factors; changes in government regulation; changes in tax requirements (including tax rate changes, new tax laws and revised tax law interpretations); results of litigation or arbitration; interest rate and currency fluctuations and other market conditions; economic and political conditions in international markets; and the timing, impact and other uncertainties of future events or circumstances.

պայմանները, ինչպես նաև ապագա իրադարձությունների և հանգամանքների ժամանակագրությունը, ազդեցությունը և այլ անորոշությունները:	
ԵԱԶԲ-ն պարտավոր չէ և մտադիր չէ նոր տեղեկատվության, ապագա իրադարձությունների կամ որևէ այլ հիմքով թարմացնել կամ վերանայել սույն փաստաթղթում ներառված որևէ կանխատեսում: ԵԱԶԲ-ին կամ վերջինիս անունից հանդես եկող անձանց վերագրվող ցանկացած հետագա գրավոր կամ բանավոր կանխատեսում պարտադիր պետք է դիտարկվի սույն փաստաթղթում ներառված նախազգուշացնող հայտարարությունների հետ ամբողջության մեջ: Հաշվի առնելով նկարագրված ռիսկերը, անորոշությունները և ենթադրությունները՝ Պարտատոմսերի պոտենցիալ գնորդը չպետք է անհարկի վստահություն ցուցաբերի նշված կանխատեսումների նկատմամբ:	EDB is not obliged to, and does not intend to, update or revise any forward-looking statements made in this document whether as a result of new information, future events or otherwise. All subsequent written or oral forward-looking statements attributed to EDB, or to persons acting on EDB's behalf, are expressly qualified in their entirety by the cautionary statements contained throughout this document. As a result of these risks, uncertainties and assumptions, a prospective purchaser of the Bonds should not place undue reliance on these forward-looking statements.
1. ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	**1. INFORMATION ON THE ISSUER**
Ներածություն և ընդհանուր նկարագիր	**Introduction and overview**
ԵԱԶԲ-ն միջազգային զարգացման բանկ է, որը 2006 թվականի հունվարի 12-ին հիմնադրվել է Ռուսաստանի Դաշնության և Ղազախստանի Հանրապետության կողմից՝ Եվրասիական զարգացման բանկը հիմնադրելու մասին համաձայնագրի (այսուհետ՝ «Հիմնադրման Համաձայնագիր») հիման վրա և որը իր գործունեությունը սկսել է 2006 թվականի հունիսի 16-ին: Սույն փաստաթղթի ամսաթվի դրությամբ Բանկն ունի վեց	EDB is an international development bank established by the Russian Federation and the Republic of Kazakhstan on January 12, 2006, under the agreement establishing the Eurasian Development Bank (the "Establishing Agreement") and having commenced its operations on June 16, 2006. As of the date of this Notice to Investors, the Bank has six member states - the Republic of Armenia, the Republic of Belarus, the Republic of Kazakhstan, the Kyrgyz Republic, the Russian

անդամ պետություն՝ Հայաստանի Հանրապետությունը, Բելառուսի Հանրապետությունը, Ղազախստանի Հանրապետությունը, Ղրղզական Հանրապետությունը, Ռուսաստանի Դաշնությունը և Տաջիկստանի Հանրապետությունը (այսուհետ՝ «Անդամ Պետություններ»):	Federation, and the Republic of Tajikistan (the "Member States").
Բանկը հիմնադրվել է Անդամ Պետություններում շուկայական տնտեսության զարգացումը, տարածաշրջանային տնտեսության զարգացումը և Անդամ Պետությունների միջև համագործակցությունը և տնտեսական ինտեգրումը խթանելու ռազմավարական նպատակով: ԵԱՁԲ-ի նպատակները կիսող ցանկացած շահագրգիռ պետություն և միջազգային կազմակերպություն կարող է դիմել Բանկի անդամ դառնալու համար:	The Bank was established with the strategic goal of promoting the development of the market economy in the Member States, facilitating regional economic development, and promoting cooperation and economic integration among the Member States. Any interested states and international organisations sharing the EDB's objectives may apply to become a member of the Bank.
Բանկը ոչ քաղաքական կազմակերպություն է, և վերջինիս կանոնադրությունը, որը կցված է Հիմնադրման Պայմանագրին՝ որպես հավելված (այսուհետ՝ Կանոնադրություն), սահմանում է, որ Բանկը չպետք է միջամտի Անդամ Պետությունների քաղաքական գործընթացներին, ինչպես նաև կայացնի վարկավորման որոշումներ՝ հիմնվելով Անդամ Պետությունների առաջարկությունների հիման վրա: Հիմնադրման Պայմանագրի և Կանոնադրության ամբողջական տեքստերը, ինչպես նաև Կանոնադրության հետագա փոփոխությունները (եթե այդպիսիք լինեն) հասանելի են (կլինեն) Բանկի ինտերնետային կայքում՝ https://eabr.org/en/about/:	The Bank is a non-political organisation, and its charter (annexed to the Establishing Agreement) (the "Charter") provides that the Bank should neither intervene in political events within the Member States, nor make lending decisions based upon recommendations of the Member States. The full text of the Establishing Agreement and the Charter, as well as further amendments to the Charter (if any) is (will be) available on the Bank's website: https://eabr.org/en/about/.

Բանկի առաջնային գործառույթներից մեկը Անդամ Պետություններում խոշոր ենթակառուցվածքային ծրագրերի ֆինանսավորումն է, ինչը Բանկը իրականացնում է մասնավոր և պետական սուբյեկտներին վարկերի և պարտքային ֆինանսավորման տրամադրման, երաշխիքների տրամադրման, առևտրի ֆինանսավորման և պետություն-մասնավոր գործընկերության ծրագրերում մասնակցության, ներդրումային խորհրդատվության տրամադրման և այլ ֆինանսական գործիքների միջոցով: Բանկը ձգտում է ապահովել իր կողմից ֆինանսավորվող բոլոր ծրագրերի ֆինանսական կենսունակությունը:	One of the Bank's primary functions is to provide financing for large infrastructure projects in the Member States, which it implements through provision of loans and debt financing to private and public entities, guarantees, trade finance, participation in the projects of public-private partnership, providing investment consulting, and providing other financial instruments. The Bank seeks to ensure that all of the projects that it funds are financially viable.
Բանկն օժտված է լրիվ իրավասուբյեկտությամբ՝ որպես միջազգային կազմակերպություն, կարգավորվում է միջազգային իրավունքով և իրավունք ունի մտնելու պայմանագրային հարաբերությունների մեջ, ձեռք բերելու և տնօրինելու գույք, ինչպես նաև նախաձեռնելու դատական և արբիտրաժային գործընթացներ: Անդամ Պետությունները պատասխանատվություն չեն կրում Բանկի պարտավորությունների, ներառյալ՝ Պարտատոմսերին առնչվող պարտավորությունների համար: Բանկի հիմնադիր փաստաթղթերը ներառում են դրույթներ, որոնք սահմանում են Բանկի իրավական կարգավիճակը և որոշակի անձեռնմխելիություն ու արտոնություններ Անդամ Պետությունների տարածքում:	The Bank has full legal personality as an international organisation, is subject to international law and has the capacity to contract, acquire and dispose of property and to institute judicial and arbitral proceedings. The Member States are not responsible for the Bank's liabilities, including those under the Bonds. The Bank's formation documents contain provisions that accord the Bank's legal status and certain immunities and privileges in the territories of the Member States.
Նպատակ	**Purpose**

Բանկը նպատակ ունի ներդրումային գործունեությամբ խթանելու Անդամ Պետություններում շուկայական տնտեսության զարգացումը, դրանց կայուն տնտեսական զարգացումը և փոխադարձ առևտրի և տնտեսական հարաբերությունների ընդլայնումը: Բանկը նպատակաուղղված է հետևյալ տեսակի ծրագրերի զարգացմանը.	The Bank aims to contribute to the development of the market economy in the Member States, their sustainable economic growth and the expansion of mutual trade and economic relations through investment activities. The Bank targets the development of the following types of projects:
• ուժեղ ինտեգրացիոն ազդեցություն ունեցող ծրագրեր (միջպետական ենթակառուցվածքային ծրագրերը, որոնք խթանում են տնտեսական կապերը և առևտուրը և ազգային ինտեգրացիոն ենթակառուցվածքային ծրագրերը, ծրագրերը, որոնք խթանում են կորպորատիվ ինտեգրումը Անդամ Պետությունների ընկերությունների միջև, Անդամ Պետությունների սուբյեկտների միջև առևտրային գործարքները, Անդամ Պետություններից փոխադարձ ներդրումների զգալի մասնաբաժին ունեցող ծրագրերը,	• projects with a strong integration effect (interstate infrastructure projects promoting economic ties and trade and national integration infrastructure projects; projects which foster corporate integration between companies in the Member States; trade transactions between counterparties in the Member States; projects with a significant proportion of mutual investment from the Member States);
• ազգային զարգացման ծրագրեր (ազգային, տարածաշրջանային և մունիցիպալ ենթակառուցվածքային ծրագրեր տարբեր ոլորտներում, ծրագրեր, որոնք ուղղված են զարգացնելու և հիմնելու նոր արտադրական օբյեկտներ, նորարարական բաղադրիչներով ծրագրեր, որոնք նպաստում են ազգային ընկերությունների տեխնոլոգիական վերափոխմանը, կրկնօրինակելի ներդրումային և զարգացման ծրագրեր):	• national development projects (national, regional and municipal infrastructure projects in various sectors; projects to develop and set up new production facilities; projects with innovative components that promote the technological transformation of national companies; replicable investment projects and development programmes).

Ի հավելումն տարածաշրջանային զարգացման կարևոր ծրագրերում ներդրումներին՝ Բանկը, համաձայն Կանոնադրության, պետք է խորհրդատվություն տրամադրի Անդամ Պետություններին տնտեսական զարգացման, ռեսուրսների արդյունավետ օգտագործման և առևտրային ու տնտեսական հարաբերությունների ընդլայնման հարցերի շուրջ, ինչպես նաև պետք է հավաքի և վերլուծի հանրային և միջազգային ֆինանսների վերաբերյալ տվյալներ: Բանկը նաև ձգտում է տնտեսական զարգացման ֆինանսավորման հարցերով համագործակցել այլ միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների հետ և կարող է իրականացնել այլ գործունեություն, որը չի հակասում իր նպատակներին:	In addition to investing in significant regional development projects, the Bank is also required by the Charter to advise the Member States on issues of economic development, the effective use of resources and the expansion of trade and economic relations and to collect and analyse data on public and international finance. The Bank also seeks to cooperate with other international organisations and foreign states interested in financing economic development and may carry out other activities that do not conflict with its objectives.
Ռազմավարություն	**Strategy**
Համաձայն Եվրասիական զարգացման բանկի՝ 2022-2026թթ. ռազմավարության՝ ԵԱՁԲ-ն կենտրոնանալու է հետևյալի վրա.	According to the Eurasian Development Bank Strategy for 2022–2026, the EDB will focus on:
• Բանկի՝ «ԵԱՏՄ+»-ում (Եվրասիական տնտեսական միություն և Տաջիկստանի Հանրապետություն) ուրույն ինտեգրացիոն դերի ամրապնդում:	• Strengthening the Bank’s unique integration role in the EAEU+ (the Eurasian Economic Union and the Republic of Tajikistan).
• Առնվազն երեք առանցքային ինտեգրացիոն մեգածրագրի իրականացում, ներառյալ՝ Եվրասիական տրանսպորտային ցանցը, Եվրասիական ապրանքաբաշխման ցանցը և Կենտրոնական Ասիայի ջրային և էներգետիկ համալիրը: ԵԱՁԲ-ն	• Implementing a minimum of three key integration megaprojects, including the Eurasian Transport Network, the Eurasian Commodity Distribution Network and Central Asia’s Water and Energy Complex. EDB will configure and launch projects in several sectors, notably transport

կիրականացնի ծրագրեր մի քանի ոլորտներում, մասնավորապես՝ տրանսպորտային ենթակառուցվածքների և լոգիստիկայի, պարենային անվտանգության, ջրի և էներգետիկայի ոլորտներում:	infrastructure and logistics, food security, water and energy.
• ԵԱՁԲ-ի թվային փորձի զարգացում: ԵԱՁԲ-ի Թվային նախաձեռնությունների հիմնադրամի միջոցով Բանկը մտադիր է աջակցել Անդամ Պետություններում թվային զարգացմանը:	• Developing EDB's digital expertise. Through the EDB's Fund for Digital Initiatives, the Bank intends to support digital development in the Member States.
• Անդամ Պետություններին աջակցում՝ հասնելու իրենց Կայուն զարգացման նպատակներին: Որպես իր պատասխանատու ներդրումային մոտեցման մաս՝ Բանկը նպատակ ունի ընդլայնելու կանաչ և սոցիալական ծրագրերի ֆինանսավորումը:	• Helping the Member States to achieve their Sustainable Development Goals. As part of its responsible investment approach, the Bank aims to expand financing for green and social projects.
• ԵԱՁԲ-ի գործունեության ընդլայնում փոքր շահառու երկրներում: Անդամ Պետությունների տնտեսական և ներդրումային բնութագրերը կառուցելու համար մշակվել են հնգամյա ռազմավարություններ: Հայաստանի Հանրապետության համար պետական ռազմավարությունը ենթադրում է Բանկի՝ որպես բազմակողմ զարգացման բանկի դերի բարձրացումը ներդրումային ծրագրերի ոչ սուվերեն ֆինանսավորման խթանման գործում: ԵԱՁԲ-ն առաջնահերթություն է տալիս այն ծրագրերին, որոնք կարող են առավելագույնի հասցնել իր ներդրումը ազգային զարգացման օրակարգում: Բանկը մտադիր է կենտրոնանալ երկրի	• Enhancing operations in the EDB's smaller stakeholder countries. Five-year strategies have been developed to tailor the economic and investment profiles of the Member States. The country strategy for the Republic of Armenia involves enhancing the Bank's role as a multilateral development bank in boosting non-sovereign financing for investment projects. EDB is prioritising projects that might maximise its contribution to the national development agenda. The Bank intends to focus on promoting the country's energy and food security, economic potential and digital transformation.

էներգետիկ և պարենային անվտանգության, տնտեսական ներուժի և թվային վերափոխման խթանման վրա:	
• Իր ներդրումային փորձի կենտրոնացում այն երկրներում, որտեղ գործունեություն է ծավալում: Ակնկալվում է, որ Բանկի՝ միջպետական համալիր ծրագրերի իրականացման գործում ուրույն փորձը կուժեղացնի իր դիրքը՝ որպես առաջատար ֆինանսավորող հաստատություն այն երկրներում, որտեղ այն գործունեություն է ծավալում:	• Consolidating its investment expertise in the countries in which it operates. The Bank's unique expertise in structuring complex inter-country projects is expected to enhance its position as the leading financing institution in the countries in which it operates.
• ԵԱՉԲ-ի համար ռեսուրսների բազա ապահովելու համապարփակ մոտեցման մշակում: Ակնկալվում է, որ այս ռազմավարության իրականացումը կներառի մրցակցային ռեսուրսավորում՝ կապված վարկերի (ներառյալ՝ տեղական արժույթներով) և Բանկի բաժնետիրական կապիտալի ընդլայնման հետ:	• Developing a comprehensive approach to securing the resource base for the EDB. Implementing this strategy is expected to involve competitive resourcing with regard to borrowing (including in local currencies) and in expanding the Bank's share capital.
Իրավական կարգավիճակ, արտոնություններ և անձեռնմխելիություն	**Legal Status, Privileges and Immunities**
Բանկի՝ Անդամ Պետությունների տարածքում գտնվող գույքն ու ակտիվները օժտված են անձեռնմխելիությամբ ցանկացած տեսակի բռնագրավումից, բռնագանձումից, արգելադրումից, կոնֆիսկացիայից և սեփականազրկումից՝ մինչև Բանկի նկատմամբ վերջնական դատական ակտի կայացումը: Բանկին պատկանող արխիվները, գույքն ու տեղեկատվությունը անձեռնխելի են	The property and assets of the Bank that are located in the territories of the Member States are immune from all forms of seizure, attachment, execution, search, requisition, arrest, confiscation or expropriation before the delivery of a final judgment against the Bank. The archives, property and information belonging to the Bank are inviolable in the territories of the Member States. The members of the Council, the Chairman of the

Անդամ Պետությունների տարածքում: Բանկի Խորհրդի անդամները, Կառավարման Խորհրդի Նախագահը, բոլոր Տեղակալներն ու անդամները և Բանկի բոլոր աշխատակիցները անձեռնմխելի են այն դատական և վարչական վարույթների մեծամասնությունից, որոնք իրականացվում են նրանց՝ պաշտոնեական պարտականությունները կատարելու շրջանակներում իրականացված գործողությունների առնչությամբ:	Management Board, all Deputy Chairmen of the Management Board, members of the Management Board and all employees of the Bank are granted immunity from most judicial or administrative prosecutions against actions carried out by them whilst performing their official duties.
Այնքանով, որքանով դա անհրաժեշտ է Բանկի կողմից իր նպատակների իրականացման և պարտականությունների կատարման համար, Բանկի գույքն ու ակտիվները պաշտպանված են ցանկացած սահմանափակումից, արգելանքից և մորատորիումից: Այնուամենայնիվ, Կանոնադրությունը թույլ է տալիս Խորհրդին հրաժարվել Կանոնադրությամբ սահմանված ցանկացած անձեռնմխելիությունից և արտոնությունից (սահմանելով կամ առանց սահմանելու այդպիսի հրաժարման պայմաններ), եթե դա բխում է Բանկի շահերից: Կառավարման Խորհրդի Նախագահը պարտավոր է հրաժարվել Բանկի ցանկացած աշխատակցի (բացառությամբ Կառավարման Խորհրդի Անդամների) ցանկացած անձեռնմխելիությունից և արտոնությունից, երբ իր կարծիքով այդպիսի անձեռնմխելիությունը կամ արտոնությունը կվնասի արդարադատությանը, և երբ այդպիսի հրաժարումը որևէ վնաս չի պատճառի Բանկին: Նմանատիպ հանգամանքներում և նույն պայմաններով Խորհուրդը	To the extent required by the Bank in order to achieve its objectives or perform its duties, all of the Bank's property and assets are free from all restrictions, injunctions and moratoria. However, the Charter allows the Council to waive any immunity, privilege or benefit granted by the Charter (either with or without conditions attached to such waiver) if it is in the interests of the Bank to do so. The Chairman of the Management Board is obliged to waive any immunity or privilege concerning any employee of the Bank (except the members of the Management Board) when, in his or her opinion, such immunity or privilege would be detrimental to justice, and when such a waiver would not cause any harm to the Bank. In similar circumstances and under the same conditions, the Council is obliged to waive any immunity or privilege concerning the members of the Management Board.

պարտավոր է հրաժարվել Կառավարման Խորհրդի անդամների ցանկացած անձեռնմխելիությունից և արտոնությունից:	
Բանկը, վերջինիս եկամուտները, գույքը և այլ ակտիվները, ինչպես նաև Անդամ Պետությունների տարածքում Կանոնադրության համաձայն Բանկի կողմից իրականացվող ցանկացած գործունեություն ու գործարք ազատված է բոլոր հարկերից, տուրքերից, պարտադիր վճարներից և այլ վճարումներից՝ բացառությամբ մատուցված ծառայությունների համար որոշակի վճարներից: Բանկի կողմից թողարկված արժեթղթերի հետ կապված բոլոր պարտավորությունները և դրանց դիմաց վճարվող բոլոր տոկոսները կամ շահաբաժինները Բանկի կողմից վճարվում են առանց Անդամ Պետություններում հարկման:	The Bank, its income, property and other assets, as well as all of the operations and transactions carried out by it in accordance with the Charter within the territory of the Member States are exempt from all taxes, levies, duties and other payments except for certain fees for services rendered. All obligations under securities issued by the Bank together with all interest or dividends payable thereon are paid by the Bank free of tax in the Member States.
Բանկը ազատված է լիցենզավորումից, վերահսկողությունից և կարգավորումից, այդ թվում՝ Անդամ Պետությունների կենտրոնական (ազգային) բանկերի (համարժեք մարմինների) կողմից:	The Bank is exempt from licensing, supervision and regulation, including such by the central banking authorities of the Member States.
Բանկի և որևէ Անդամ Պետության կառավարության միջև Բանկի և Անդամ Պետության միջև համաձայնագրերի առնչությամբ ծագած վեճերը պետք է լուծվեն նախ բանակցությունների միջոցով, իսկ եթե վերջիններս ձախողվեն՝ Խորհրդի կողմից, և այնքանով, որքանով որ մնում են չլուծված՝ արբիտրաժի միջոցով:	Disputes between the Bank and the government of any Member State under agreements between the Bank and a Member State are to be resolved first by negotiation and, if those negotiations fail, by the Council, and, to the extent remain unresolved, by arbitration.
Հարկում	**Taxation**

Պարտատոմսերի կապակցությամբ Բանկի կողմից կամ անունից բոլոր վճարումները պետք է կատարվեն առանց որևէ Անդամ Պետության կամ դրա որևէ իրավասու քաղաքական միավորի կամ մարմնի կողմից կամ Անդամ Պետության տարածքում գանձման, վճարման, հավաքագրման, պահման կամ հաշվարկման ենթակա որևէ բնույթի հարկի, տուրքի, պարտադիր վճարի կամ վճարման ենթակա այլ գումարի (միասին այսուհետ՝ «Անդամ Պետության Հարկեր») հիմքով նվազեցման կամ պահումների՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նման պահումը կամ նվազեցումը պահանջվում է օրենքով և/կամ Բանկի համաձայնությամբ: Նման դեպքում Բանկը ցանկացած Պարտատոմսի Սեփականատիրոջը պետք է վճարի լրացուցիչ գումարներ, ինչի արդյունքում Պարտատոմսերի Սեփականատերը կստանա այնպիսի գումար, որը կստանար, եթե այդպիսի պահում կամ նվազեցում չլիներ՝ պայմանով, որ որևէ Պարտատոմսի առնչությամբ որևէ լրացուցիչ գումար չի կարող վճարվել երրորդ կողմին Պարտատոմսի Սեփականատիրոջ անունից, որն այդպիսի Պարտատոմսի կապակցությամբ ենթակա է այդ Անդամ Պետության Հարկերով հարկման՝ Անդամ Պետության հետ այնպիսի կապի հիմքով, որը չի բխում բացառապես Պարտատոմսի Սեփականատեր լինելուց կամ Պարտատոմսի գծով վճարում ստանալուց:	All payments by or on behalf of the Bank in respect of the Bonds shall be made free and clear of, and without deduction or withholding for, any taxes, duties, assessments, or governmental charges of whatever nature imposed, levied, collected, withheld or assessed by or within any Member State or any political subdivision or any authority thereof or therein having the power to tax (collectively "Member State Taxes"), unless such withholding or deduction is required by law and/or by an agreement of the Bank. In such event, the Bank will pay such additional amounts to the holder of any Bond (also the "Bondholder") as will result in receipt by the Bondholder of such amounts as would have been received by them had no such withholding or deduction been required, except that no additional amounts shall be payable with respect to any Bond to a third party on behalf of a Bondholder who is liable to such Member State Taxes in respect of such Bond by reason of its any connection with the relevant Member State other than the mere holding of the Bond or the receipt of payment thereunder.
ԵԱՀԲ-ի վճարային գործակալը չունի որևէ Պարտատոմսի Սեփականատիրոջ անունից հարկեր պահելու որևէ պարտավորություն և չպետք է դիտարկվի որպես հարկային գործակալ:	The EDB's paying agent shall not be under any obligation to withhold taxes on behalf of the holder of any Bond or be deemed as a tax agent. The Bondholders shall be responsible for their tax obligations themselves.

Պարտատոմսերի Սեփականատերերը պետք է ինքնուրույն պատասխանատվություն կրեն իրենց հարկային պարտավորությունների համար:	
Ֆինանսական տեղեկատվություն	**Financial Information**
Բանկի տարեկան և միջանկյալ ամփոփ ֆինանսական հաշվետվությունները և տարեկան հաշվետվությունները հասանելի են Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում (https://eabr.org/en/investors/information-disclosure/financial-statements-ifrs/):	The Bank's year-end and interim condensed financial reports and its annual reports are available at the Bank's official website (https://eabr.org/en/investors/information-disclosure/financial-statements-ifrs/).
Բանկի աուդիտորներ	**Auditors of the Bank**
Ստորև ներկայացված է Բանկի աուդիտորի մասին տեղեկատվությունը. «Ռասել Բեդֆորդ Ա+Փարթներս» միջազգային աուդիտորական ընկերություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերակցություն	Below is represented the information on the auditor of the Bank: Russell Bedford A+Partners International Auditing Company Limited Liability Partnership
Ալ-Ֆարաբի Ավենյու, 202, Ալմաթի, Ղազախստանի Հանրապետություն Հեռախոսահամար՝ +7 (727) 399 80 00 www.rbpartners.kz	Al-Farabi Avenue, 202 Almaty, 050043, Republic of Kazakhstan Telephone: +7 (727) 399 80 00 www.rbpartners.kz
Բանկի և Պարտատոմսերի վերաբերյալ ցանկացած հարց կարող է հասցեագրվել հետևյալ անձին.	Any questions regarding the Bank and the Bonds may be addressed to the following person:
Աիթալինա Ժիրկովա Կառավարող տնօրեն, Ֆինանսավորման վարչության պետ Հեռախոսահամար՝ +7 (727) 244 40 44 լրացուցիչ համար 6195 Էլ. փոստ՝ capital@eabr.org	**Aitalina Zhirkova** Managing Director – Head of Funding Department Tel: +7 (727) 244 40 44 ext. 6195 E-mail: capital@eabr.org

Պարտատոմսերի վերաբերյալ ցանկացած հարց կարող է հասցեագրվել նաև հետևյալ անձանց.	Any questions regarding the Bonds may also be addressed to the following persons:
Արսեն Սարգսյան Գլխավոր գանձապետ Հեռախոսահամար՝ +374 (10) 59 04 70 Էլ. փոստ՝ ArsenSargsyan@ardshinbank.am	**Arsen Sargsyan** Chief Treasurer Tel.: +374 (10) 59 04 70 E-mail: ArsenSargsyan@ardshinbank.am
Մարգարիտ Կասիմյան գլխավոր գանձապահի տեղակալ Ֆինանսական շուկայում գործառնությունների գծով Հեռախոսահամար՝ +374 (10) 59 04 52 Էլ. փոստ՝ m.kasimyan@ardshinbank.am	**Margarit Kasimyan** Deputy Chief Treasurer on Financial Market Operations Tel.: +374 (10) 59 04 52 E-mail: m.kasimyan@ardshinbank.am
Գույք	**Property**
Բանկի գլխամասային գրասենյակը գտնվում է 220 Դոստիկի փողոց, 050051, Ալմաթի, Ղազախստանի Հանրապետություն հասցեում, և Բանկի հեռախոսահամարն է +7 (727) 244 40 44: Բանկն ունի մասնաճյուղ Սանկտ Պետերբուրգում (Ռուսաստանի Դաշնություն) և ներկայացուցչություններ Մոսկվայում (Ռուսաստանի Դաշնություն), Աստանայում (Ղազախստանի Հանրապետություն), Դուշանբեում (Տաջիկստանի Հանրապետություն), Երևանում (Հայաստանի Հանրապետություն), Մինսկում (Բելառուսի Հանրապետություն) և Բիշքեկում (Ղրղզական Հանրապետություն):	The headquarters of the Bank are located at 220 Dostyk Street, 050051, Almaty, the Republic of Kazakhstan, and the Bank's telephone number is +7 (727) 244 40 44. The Bank has a branch office in St. Petersburg, Russian Federation, and has representative offices in Moscow (Russian Federation) Astana (Republic of Kazakhstan), Dushanbe (Republic of Tajikistan), Yerevan (Republic of Armenia), Minsk (Republic of Belarus), and Bishkek (Kyrgyz Republic).
Հայաստանի Հանրապետությունում ներկայացուցչությունը գտնվում է ՀՀ, Երևան 0010, Սարգսյան 26/1, Էրեբունի	The representative office in the Republic of Armenia is located at Erebuni Plaza Business Centre, office 811, 26/1 Sargsyan St., Yerevan,

Պլազա բիզնես կենտրոն, գրասենյակ 811 հասցեում, հեռախոսահամարն է՝ +374 (10) 54 01 02:	0010, Republic of Armenia, and the telephone number is +374 (10) 54 01 02.

2. ՊԱՐՏԱՏՈՄԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ
2. INFORMATION ON THE BONDS

2.1. Պարտատոմսերի պայմաններ
2.1. Terms of the Bonds

ԹՈՂԱՐԿՈՂ	Եվրասիական զարգացման բանկ **Պարտատոմսերը չեն հանդիսանում որևէ կառավարության կամ Անդամ Պետության պարտավորություններ:**
ISSUER	Eurasian Development Bank **The Bonds are not the obligations of any government or Member State.**
ԹՈՂԱՐԿՈՂԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԿԱՅԻՆ ՎԱՐԿԱՆԻՇ	ԲԲԲ-՝ ըստ Ստանդարտ և Փուրզի
ISSUER INTERNATIONAL CREDIT RATING	BBB- by Standard & Poor’s
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐ	Ոչ ստորադաս, չապահովված, ֆիքսված տոկոսադրույքով արժեկտրոնային պարտատոմսեր
GENERAL DESCRIPTION OF BONDS	Senior, unsecured, fixed rate coupon paying bonds
ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ (ՏԵՂԱԲԱՇԽՈՂ)	«Արդշինբանկ» ՓԲԸ
LEAD MANAGER (UNDERWRITER)	Ardshinbank CJSC
ՎՃԱՐԱՅԻՆ ԵՎ ՀԱՇՎԱՐԿԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼ	Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա
PAYING AGENT AND CALCULATION AGENT	The Central Depository of Armenia
ՊԱՀԱՌՈՒ/ՌԵԵՍՏՐԱՎԱՐ	Հայաստանի կենտրոնական դեպոզիտարիա՝ որպես գործակալ (հաշվի

	օպերատոր) հանդես եկող «Արդշինբանկ» ՓԲԸ-ի միջոցով
CUSTODIAN/REGISTRY KEEPER	The Central Depository of Armenia via Ardshinbank CJSC as an agent (account operator)
ԹՈՂԱՐԿՈՂԻ ՀԱՇՎԻ ՕՊԵՐԱՏՈՐ	«Արդշինբանկ» ՓԲԸ
ISSUER'S ACCOUNT OPERATOR	Ardshinbank CJSC
ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ	Հայտ է ներկայացվելու «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի կողմից կազմակերպվող կարգավորվող շուկայում Պարտատոմսերի ցուցակման համար
BOND LISTING	An application will be sought for the Bonds to be listed on the regulated market operated by Armenia Securities Exchange OJSC
ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՏԵՍԱԿ	Հրապարակային, ներբանկային տեղաբաշխում
TYPE OF PLACEMENT	Public, intrabank allocation
ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ	30,000,000 (երեսուն միլիոն) ԱՄՆ դոլար
AGGREGATE PRINCIPAL AMOUNT OF BONDS ISSUED	USD 30,000,000 (thirty million)
ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՄԱՆ ԱՐԺՈՒՅԹ	ԱՄՆ դոլար
SUBSCRIPTION CURRENCY	USD
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԱՐԲԵՐԱԿԻՉ ԾԱԾԿԱԳԻՐ	AMEABRB21ER0
SECURITY IDENTIFIERS	AMEABRB21ER0
ԱՆՎԱՆԱԿԱՆ ԱՐԺԵՔ	1,000 (մեկ հազար) ԱՄՆ դոլար
DENOMINATION	USD 1,000 (one thousand)
ԹՈՂԱՐԿՎԱԾ ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ՔԱՆԱԿ	30,000 (երեսուն հազար)
NUMBER OF BONDS ISSUED	30,000 (thirty thousand)

ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏ	3 (երեք) տարի
CIRCULATION TENOR	3 (three) years
ԱՌԱՋԱՐԿԻ/ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԳԻՆ	Պարտատոմսի լրիվ գինը յուրաքանչյուր 100 միավոր անվանական արժեքի դիմաց, տեղաբաշխման առաջին օրվանից սկսած հաշվարկվում է հետևյալ կերպ. $$DP = \frac{c}{f}\sum_{i=1}^{N}\left(\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+t}}\right) + \left(\frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+t}}\right)$$ $$t = \frac{DSN}{DCC}$$ Որտեղ **DP՝** Պարտատոմսի գին (կլորացված կետից հետո 2 նիշի ճշտությամբ՝ հանրահաշվի կլորացման կանոններին համապատասխան) **DSN՝** գործարքի և համապատասխան արժեկտրոնի վճարման ամսաթվերի միջև ընկած օրերի քանակ, **DCC՝** գործարքին նախորդող և հաջորդող արժեկտրոնի վճարման ամսաթվերի միջև ընկած օրերի քանակ **f՝** արժեկտրոնի վճարման հաճախականություն (2՝ կիսամյակային վճարումների համար) **N՝** հաշվարկման օրվա դրությամբ մնացած՝ արժեկտրոնի վճարումների քանակ **C՝** տարեկան արժեկտրոն՝ 100 միավոր անվանական արժեքի դիմաց, **y՝** եկամտաբերություն՝ մինչև մարում:

	«Արդշինբանկ» ՓԲԸ տեղաբաշխման ամբողջ ընթացքում իր ինտերնետային կայքում հրապարակելու է յուրաքանչյուր թողարկման պարտատոմսի գինը :
OFFER/PLACEMENT PRICE	The full price of Bonds against 100 unit par value is determined by the below formula from the first date of placement. $$DP = \frac{c}{f}\sum_{i=1}^{N}\left(\frac{1}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{i-1+t}}\right) + \left(\frac{100}{\left(1+\frac{y}{100*f}\right)^{N-1+t}}\right)$$ $$t = \frac{DSN}{DCC}$$ Where **DP** is the price of the Bond (is rounded after the decimal point by 2-digit accuracy, based on the arithmetical rounding rules), **DSN** is the number of days left from the day of deal through the payment of the particular coupon, **DCC** is the number of days from the coupon payment day preceding the deal through the coupon payment succeeding the deal, **f** is the coupon payment frequency (2 for semiannual payments), **N** is the number of coupon payments left at the date of calculation, **C** is the annual coupon against 100 unit par value, **y** is the yield to maturity. Ardshinbank CJSC shall publish the bond price of each issue throughout the placement on its website.

ԱՌԱՋԱՐԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ	Օգոստոսի 15, 2023 թվական
STARTING DATE OF OFFER	August 15, 2023
ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾ	2023 թվական Օգոստոսի 15-ից մինչև 2023 թվական Սեպտեմբերի 15-ը (հաշվի առնելով Առաջարկի իրականացման ավարտի կանոնները)
PLACEMENT PERIOD	August 15, 2023 – September 15, 2023 (subject to the rules on the Ending Date of Offer)
ԱՌԱՋԱՐԿԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՎԱՐՏ (ներառյալ՝ ժամկետի ցանկացած հնարավոր փոփոխությունները)	Նախապես որոշված ժամկետ՝ Օգոստոսի 31, 2023 Փոփոխված ժամկետ՝ Սեպտեմբերի 15, 2023 Եթե Պարտատոմսերն ամբողջությամբ տեղաբաշխվում են մինչ այդ ամսաթիվը, ապա առաջարկի իրականացման ավարտի օր է համարվում այն օրը, երբ տեղաբաշխվել է վերջին Պարտատոմսը:
ENDING DATE OF OFFER (including any possible changes to the deadline)	Predetermined date: August 31, 2023 Modified date: September 15, 2023 If the Bonds are entirely placed prior to this date the Ending Date of Offer shall be the date when the last Bond is placed.
ՄԱՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ	Օգոստոսի 15, 2026 թվական
MATURITY DATE	August 15, 2026
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՁԵՎ	ոչ փաստաթղթային
FORM OF BONDS	Registered/Book entry
ԱՐԺԵԿՏՐՈՆԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔ	6.00 (վեց) % տարեկան
COUPON RATE	6.00 (six) % per annum
ԱՐԺԵԿՏՐՈՆԻ ՎՃԱՐՄԱՆ ՀԱՃԱԽԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	կիսամյակային
COUPON PAYMENT FREQUENCY	semiannual
ԱՐԺԵԿՏՐՈՆԻ ՎՃԱՐՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ	Փետրվարի 15, 2024թ., օգոստոսի 15, 2024թ., փետրվարի 15, 2025թ., օգոստոսի 15, 2025թ., փետրվարի 15, 2026թ., օգոստոսի 15, 2026թ.:

COUPON PAYMENT DATE	February 15, 2024, August 15, 2024, February 15, 2025, August 15, 2025, February 15, 2026, August 15, 2026.
ԱՐԺԵԿՏՐՈՆ	Արժեկտրոնը վճարվում է յուրաքանչյուր Արժեկտրոնի Վճարման Ամսաթվին՝ ԱՄՆ դոլարով, անվանական արժեքով՝ առանց հարկային պահման կամ նվազեցման. Վճարվող արժեկտրոնի մեծությունը որոշվում է տարեկան արժեկտրոնի մեծությունը բաժանելով տարվա ընթացքում արժեկտրոնների վճարման հաճախականության վրա: Յուրաքանչյուր պարտատոմսի գծով արժեկտրոնային եկամտի հաշվարկը կկատարվի հետևյալ բանաձևով՝ ԱԳ = (FV * C)/k որտեղ՝ ԱԳ – արժեկտրոնի գումար FV – մեկ պարտատոմսի անվանական արժեք, C – տարեկան արժեկտրոնային անվանական տոկոսադրույքն է՝ արտահայտված տոկոսներով, k – մեկ տարում վճարվող արժեկտրոնների թիվն է /
COUPON	The Coupon will be paid on each Coupon Payment Date in USD, in nominal amounts, without withholding or deduction for or on account of tax. The amount of coupon sum is determined through dividing the one-year coupon sum by the frequency of coupon payments during the year and is calculated using the following formula: CA = (FV * C)/k where: CA is the coupon amount, FV is the face value per bond, C is the annual nominal interest rate of coupon,

	K is the number of coupons payable annually.
ԱՐԺԵԿՏՐՈՆԻ ՕՐԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ	Փաստացի օրեր արժեկտրոնի փուլի ընթացքում / Փաստացի օրեր տարվա ընթացքում
CALCULATION OF COUPON DAYS	Actual days in coupon phase / Actual days in year (Actual/Actual)
ԱՐԺԵԿՏՐՈՆ ՍՏԱՑՈՂՆԵՐ	Արժեկտրոնների Վճարման Ամսաթվին կամ Մարման Ամսաթվին անմիջապես նախորդող՝ Պահառուի աշխատանքային օրվա ավարտի դրությամբ Պահառուի կողմից վարվող՝ պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում գրանցված անձինք:
COUPON RECIPIENTS	Persons registered on the registry of the bondholders maintained with the Custodian as of the end of the business day of the Custodian immediately preceding the Coupon Payment Date or the Maturity Date.
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՐ	Հայաստանի Հանրապետություն
BUSINESS DAYS	Republic of Armenia
ՀԱՋՈՐԴՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐՎԱ ԿՈՆՎԵՆՑԻԱ	Բոլոր վճարումները կատարվելու են նշված Արժեկտրոնների Վճարման Ամսաթվին և/կամ Մարման Ամսաթվին՝ ըստ Պարտատոմսերի Սեփականատերերի ցանկի՝ հիմք ընդունելով Պահառուի կողմից պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրում Արժեկտրոնների Վճարման Ամսաթվին կամ Մարման Ամսաթվին անմիջապես նախորդող՝ Պահառուի աշխատանքային օրվա ավարտի դրությամբ գրանցված տվյալները, բացառությամբ այն դեպքերի, երբ Արժեկտրոնի Վճարման Ամսաթիվը կամ Մարման Ամսաթիվը Հայաստանի Հանրապետությունում աշխատանքային օր չէ, ինչպիսի դեպքում վճարումը կատարվելու է համապատասխան

	Արժեկտրոնի Վճարման Ամսաթվին և/կամ Մարման Ամսաթվին հաջորդող առաջին աշխատանքային օրը:
FOLLOWING BUSINESS DAY CONVENTION	All payments will be made on the stated Coupon Payment Date and/or Maturity Date as per the list of Bondholders based on the data registered by the Custodian in the bondholders registry as of the end of the business day of the Custodian immediately preceding the Coupon Payment Date or the Maturity Date, unless the Coupon Payment Date or the Maturity Date is not a Business Day in the Republic of Armenia, when payment will be made on the first Business Day following the relevant Coupon Payment Date and/or the Maturity Date.
ԱՐԺԵԿՏՐՈՆԻ ԿՈՒՏԱԿՈՒՄ	Տոկոսները հաշվեգրվում են սկսած նախորդ Արժեկտրոնի Վճարման Ամսաթվից կամ Թողարկման Ամսաթվից (ինչպես կիրառելի է), ներառելով այդ ամսաթվերը և չներառելով հաջորդ Արժեկտրոնի Վճարման Ամսաթիվը կամ Մարման Ամսաթիվը (ինչպես կիրառելի է): Կասկածներից խուսափելու համար՝ երբ Արժեկտրոնի Վճարման Ամսաթիվը ճշգրտվում է Հաջորդ Աշխատանքային Օրվա Կոնվենցիայի համաձայն, տոկոսները հաշվեգրվում են մինչև բայց չներառելով նման կարգով հետաձգված ամսաթիվը:
COUPON ACCRUAL	Interest will accrue from and including the previous Coupon Payment Date or the Issuance Date, as the case may be, but excluding the next Coupon Payment Date or the Maturity Date, as the case may be. For the avoidance of doubt, where the Coupon Payment Date has been adjusted in accordance with the Following Business Day Convention, interest will accrue to but excluding such postponed date.
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՐՈՒՄ	Միանվագ մարում Մարման Ամսաթվին

BOND REDEMPTION	Bullet (lump-sum) repayment on the Maturity Date
ՄԱՐՄԱՆ ԳԻՆ	Թողարկված Պարտատոմսերի Ընդհանուր Անվանական Արժեքի 100.00%
REDEMPTION PRICE	100.00% of the Aggregate Principal Amount of Bonds Issued
ՄԱՐՄԱՆ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿ	• Պարտատոմսերի արժեկտրոնների կամ պարտատոմսերի մարմանն ուղղված վճարումն իրականացնելու նպատակով արժեկտրոնների և/կամ Պարտատոմսերի մարման օրը Թողարկողը համապատասխան հանձնարարական է ներկայացնելու Հաշվի Օպերատորին: • Թողարկողը մինչև արժեկտրոնների և/կամ մայր գումարների վճարման օրվա ժամը 12:00-ը Հաշվի օպերատորի Դրամական հաշվին ապահովելու է հանձնարարականում նշված գումարի չափով դրամական միջոցների առկայությունը: • Հաշվի օպերատորը հանձնարարականը ներկայացնելու է Վճարային գործակալին, որի արդյունքում արժեկտրոնների վճարումներն իրականացվում են՝ ըստ պարտատոմսերի Հաշվետերերի արժեթղթերի հաշիվների հաշվեկշիռներին համապատասխան, վերջիններիս կողմից նշված բանկային և/կամ Դրամական հաշվին:
SETTLEMENT AT REDEMPTION	• For the purpose of distribution of cash funds, resulting from payment of Bond coupons or redemption of Bonds the Issuer will submit the respective order to Account Operator. • By 12:00 on the day of payment of the coupon and/or nominal amount The Issuer shall ensure availability of cash funds in the

	Cash accounts of the Account Operator in the amount specified in the Instruction. • The Account Operator shall submit the order to the Paying Agent, after which the payments of coupons shall be made in accordance with the balances of securities accounts of the Accounts holders to the specified bank or/and Cash accounts.
ՎՃԱՐՄԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ	ԵԱԶԲ-ի՝ Պարտատոմսերի կապակցությամբ վճարման պարտավորությունները յուրաքանչյուր վճարման մասով համարվում են կատարված այն պահից, երբ համապատասխան գումարները մուտքագրվել են Հաշվի Օպերատորի համապատասխան հաշվին: ԵԱԶԲ-ն որևէ պարագայում պատասխանատու չէ այդպիսի վճարումների՝ որևէ բանկի, վճարային գործակալի, դեպոզիտարիայի կամ այլ միջնորդի միջոցով հետագա փոխանցման համար:
DISCHARGE OF PAYMENT OBLIGATIONS	EDB's obligation to make payments in respect of the Bonds will be duly discharged at the moment of crediting on the Account Operator's respective account, in respect of each amount so paid. Under no circumstances will EDB be responsible for any further transfers of any such payments through any banks, paying agents, depositaries or other intermediaries.
ՕՊՑԻՈՆՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ	Առկա չեն
EMBEDDED OPTIONS	None
ԿԼՈՐԱՑՈՒՄ	Պարտատոմսերի գինը կլորացվում է մինչև կետից հետո մոտակա երկու նիշը: Հաշվեգրված տոկոսները կամ Արժեկտրոնը կլորացվում է մինչև ստորակետից հետո մոտակա երկու նիշը:
ROUNDING	The price of the Bonds should be rounded to the nearest two digits after the decimal point.

	Accrued Interest or the Coupon should be rounded to the nearest two digits after the decimal point.
ՍՏԱՑՎԱԾ ՀԱՍՈՒՅԹԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ	Պարտատոմսերի վաճառքից ստացված հասույթը կուղղվի ԵԱԶԲ-ի Հայաստանում վարկային գործառնությունների, ներդրումների և կայուն զարգացման ծրագրերի ֆինանսավորմանը:
USE OF PROCEEDS	The proceeds from the sale of the Bonds will be used to finance EDB's loan operations, investments and sustainable development projects in Armenia.
ԱՌԱՋԱՐԿԻ ԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ	Սահմանված չեն Բանկի կողմից
OFFERING AND CIRCULATION RESTRICTIONS	Not defined by the Bank
ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ	Տեղաբաշխումն ու աճուրդը իրականացվելու են «Արդշինբանկ»-ի ներբանկային համակարգով: Պարտատոմսերի բաժանորդագրություն չի իրականացվելու: Պարտատոմսերի ձեռքբերման համար ներդրողները սահմանված կարգով պետք է լրացնեն և պատշաճ կերպով «Արդշինբանկ» ՓԲԸ ներկայացնեն պարտատոմսերի ձեռքբերման հայտ-հանձնարարականները, կատարեն համապատասխան վճարումը, որով կհավաստեն Պարտատոմսերի թողարկման պայմաններն ընդունելու իրենց պատրաստակամությունը և որով այդ պայմանները կդառնան այդպիսի ներդրողների համար պարտադիր, ինչպես նաև «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ-ում Պարտատոմսերի գրանցման և հաշվառման նպատակով՝ համապատասխան հաշվի բացման վերաբերյալ քաղվածք:

	Թողարկման նպատակով «Արդշինբանկ» ՓԲԸ-ում բացված համապատասխան հաշվեհամարներին դրամական միջոցների ստացումից անմիջապես հետո «Արդշինբանկ» ՓԲԸ-ն Դեպոզիտարիային ներկայացնում է պարտատոմսերի տեղաբաշխման հանձնարարագիր՝ Բանկի թողարկման հաշվից համապատասխան քանակի Պարտատոմսերի փոխանցման և ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ արժեթղթերի հաշվին հաշվեգրման համար: Դեպոզիտարիայից ներդրողի կամ ներդրողի անվանատիրոջ դեպո հաշվին պարտատոմսերի փոխանցման վերաբերյալ համապատասխան հաստատում ստանալուց անմիջապես հետո «Արդշինբանկ» ՓԲԸ-ն թողարկման նպատակով բացված համապատասխան տարանցիկ հաշվեհամարներից իր օգտագործման համար մատչելի է դարձնում համապատասխան հայտ-հանձնարարականում նշված դրամական միջոցները: Պարտատոմսերի տեղաբաշխման նախատեսված վերջնաժամկետից հետո թողարկման նպատակով բացված համապատասխան տարանցիկ հաշվեհամարներին ստացված գումարները ենթական են հետ վերադարձման, իսկ դրանց համապատասխան հայտ-հանձնարարականները չեն կարող բավարարվել՝ անկախ դրանց առաքման և/կամ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից ստացման ժամկետից: Հայտ-հանձնարարականի ներկայացումից հետո մինչև տվյալ օրվա գործառնական օրվա ավարտը համապատասխան վճարում չիրականացրած ներդրողների հայտ-հանձնարարականները համարվում են

	անվավեր և չեն մասնակցում տեղաբաշխմանը:
PLACEMENT PROCEDURE	Placement and bidding will take place through Ardshinbank intrabank system. The Bonds will not be offered for subscription. To acquire the Bonds, the investors have to complete in due form the respective buy orders and file the latter with Ardshinbank CJSC, make the respective payment, whereby they will confirm the acceptance of the Bond issuance terms, and upon which these terms will become obligatory for such investors, as well as provide extracts from the corresponding account for the registration and record of Bonds in the Central Depository of Armenia OJSC. Immediately after receipt of the funds to the relevant bank account opened in Ardshinbank CJSC for the purpose of issuance, Ardshinbank CJSC shall submit to the Central Depository of Armenia OJSC a bond placement order for transferring the relevant number of Bonds from the Bank's account and crediting to the securities account of the investor or investor's nominee. Immediately upon receipt from the Central Depository of Armenia OJSC of an appropriate confirmation of the transfer of Bonds to the investor's or investor's nominee's depo account, Ardshinbank CJSC shall make available for itself the cash funds on the relevant transit accounts opened for the issuance referred to in the order. The amounts received on the relevant transit accounts opened for the issuance after the deadline for allocation are subject to return, and the respective orders may not be satisfied irrespective of the date of the delivery and/or receipt by Ardshinbank CJSC. The buy orders of investor having failed to effect the respective payment until the end of the operational day of submission of the buy order

	are deemed invalid and may not participate in the placement.
ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ	Առկա չեն
RESTRICTIONS AT PLACEMENT	None
ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿ	Համաձայն «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կիրառելի կանոնների
SETTLEMENT AT PLACEMENT	In accordance with the applicable rules of Ardshinabank CJSC
ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ	Պարտատոմսերը տեղաբաշխվում են Առաջատար կազմակերպչի (Տեղաբաշխողի) կողմից՝ «լավագույն ջանքի» սկզբունքով:
UNDERWRITING	The Bonds shall be placed by the Lead Manager (Underwriter) on a “Best efforts” basis.
ԿԻՐԱՌՎՈՂ ԻՐԱՎՈՒՆՔ	Պարտատոմսերը և դրանց առնչվող բոլոր պայմանագրերը կարգավորվում և մեկնաբանվում են ՀՀ օրենսդրությամբ:
GOVERNING LAW	The Bonds and all agreements thereto will be governed by and construed in accordance with Armenian law.
ՎԱՃԱՌՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐ	Պարտատոմսերը չեն գրանցվել և չեն գրանցվելու ԱՄՆ-ի՝ 1933 թվականի Արժեթղթերի մասին օրենքի (բոլոր փոփոխություններով) կամ որևէ՝ արժեթղթերի մասին օրենքների համաձայն և չեն կարող առաջարկվել կամ վաճառվել Ամերիկայի Միացյալ Նահանգներում կամ որևէ ԱՄՆ-ի անձի (ինչպես սահմանված է ԱՄՆ-ի՝ 1933 թվականի Արժեթղթերի մասին օրենքի) կամ վերջինիս հաշվին կամ օգտին: Պարտատոմսերի վերաբերյալ առաջարկ կամ առաջարկներ անելու իրավեր չի արվում, և Պարտատոմսերը չեն կարող առաջարկվել կամ վաճառվել

	Ղազախստանում՝ բացառությամբ վերջինիս՝ արժեթղթերի մասին կիրառելի օրենքներին համապատասխան: Այս փաստաթուղթը նախատեսված չէ Ռուսաստանի Դաշնությունում գտնվող որևէ անձի համար, ով «որակավորված ներդրող» չէ՝ 1996 թվականի ապրիլի 22-ի թիվ 39-FZ «Արժեթղթերի շուկայի մասին» Դաշնային օրենքի (բոլոր փոփոխություններով) 51.2-րդ հոդվածի իմաստով, (այսուհետ՝ «Ռուսական ՈՆ»), և չպետք է տարածվի կամ շրջանառվի Ռուսաստանում կամ հասանելի լինի Ռուսաստանում որևէ անձի, ով Ռուսական ՈՆ չէ՝ բացառությամբ այն դեպքերի, երբ նման անձին այլ կերպ թույլատրված է հասանելիություն ստանալ նման տեղեկատվության՝ համաձայն Ռուսաստանի օրենսդրության: Պարտատոմսերը չեն գրանցվել և չեն գրանցվելու Ռուսաստանում և նախատեսված չեն Ռուսաստանում «տեղաբաշխման» կամ «հանրային շրջանառության» համար (յուրաքանչյուրը՝ ինչպես սահմանված է Ռուսաստանի արժեթղթերի մասին օրենքներով), բացառությամբ Ռուսաստանի օրենսդրությամբ այլ կերպ թույլատրելի դեպքերի:
SELLING RESTRICTIONS	The Bonds have not been and will not be registered under the U.S. Securities Act 1933 (as amended) or any state securities laws and may not be offered or sold within the United States of America or to, or for the account or benefit of, any U.S. person (as defined in the U.S. Securities Act 1933). No offer or invitation to make offers is being made in respect of the Bonds, and the Bonds

	may not be offered or sold in Kazakhstan, in each case, except in compliance with the applicable securities laws of Kazakhstan. This document is not intended for any persons in the Russian Federation who are not "qualified investors" within the meaning of Article 51.2 of the Federal Law No. 39-FZ "On the Securities Market" dated 22 April 1996, as amended (the "Russian QIs"), and must not be distributed or circulated into Russia or made available in Russia to any persons who are not Russian QIs, unless and to the extent they are otherwise permitted to access such information under Russian law. The Bonds have not been and will not be registered in Russia and are not intended for "placement" or "public circulation" in Russia (each as defined in Russian securities laws), unless and to the extent otherwise permitted under Russian law.
ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀՂԲՅՈՒՐ	Պարտատոմսերի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև նման տեղեկատվության հետագա փոփոխությունները (եթե այդպիսիք լինեն) հասանելի են Բանկի ինտերնետային կայքում (https://eabr.org/en/)
SOURCE OF INFORMATION ON THE BONDS	Information on the Bonds, as well as further changes to such information (if any) may be found on the Bank's website (https://eabr.org/en/).

2.2. Պարտատոմսերից բխող իրավունքներ	**2.2. Rights Arising from the Bonds**
Պահառուի կողմից վարվող ռեեստրում գրանցված Պարտատոմսերի Սեփականատերերն իրավունք ունեն ստանալու արժեկտրոնային եկամուտ և	Bondholders registered in the registry maintained by the Custodian have the right to get coupon income and the face value of the Bonds at redemption, proportionally to their

մարման ժամանակ Պարտատոմսերի անվանական արժեքը՝ իրենց ներդրմանը համամասնորեն՝ սույն փաստաթղթի 2.1 Բաժնի դրույթներին համապատասխան:	investment, according to the terms stipulated in Section 2.1 of this document.
2.3. Սեփականության իրավունքի փոխանցում	**2.3. Transfer of Title**
Պարտատոմսի նկատմամբ սեփականության իրավունքը փոխանցվում է Պահառուի կողմից (կամ եթե Պարտատոմսերի Սեփականատիրոջ արժեթղթերի հաշիվը վարում է ենթապահառուն, վերջինիս կողմից) Պարտատոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի՝ Պարտատոմսի Սեփականատիրոջ անունով գրանցմամբ: Բանկը և Վճարող Գործակալը կարող են Պահառուի կողմից վարվող պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի հիման վրա տրամադրված Պարտատոմսերի Սեփականատերերի ցանկում նշված Պարտատոմսերի Սեփականատերերին համարել այդպիսի Պարտատոմսերով հավաստվող իրավունքների բացարձակ սեփականատեր՝ վճարումներ կատարելու և բոլոր այլ նպատակներով:	Title to the Bonds shall pass upon registration of the title to the Bond by the Custodian (or, in case if the Bondholder's securities account is maintained by a subcustodian, then by such subcustodian) in the Bondholder's name. The Bank and the Paying Agent may deem and treat the Bondholders specified in the Bondholder's list issued by the Custodian based on the bondholders' registry maintained by the Custodian as the absolute holder of rights represented by such Bonds for the purpose of making payments and for all other purposes.
2.4. Առաջատար կազմակերպիչը (Տեղաբաշխողը) և Վճարային Գործակալը	**2.4. Lead Manager (Underwriter) and Payment Agent**
1) Առաջատար կազմակերպիչը (Տեղաբաշխողը) իրականացնում է հետևյալ գործառույթները. (ա) հանդես է գալիս որպես առաջատար կազմակերպիչ (տեղաբաշխող) և գործարքի կազմակերպիչ, (բ) աջակցում է գործարքի հետ կապված ցանկացած անհրաժեշտ փաստաթղթի	1) The Lead Manager (Underwriter) performs the following functions: (a) acts as the lead manager (underwriter) and joint bookrunner of the transaction; (b) assists with the drafting and preparation of any necessary documentation in respect of the transaction with a view to such documentation being prepared, negotiated and

մշակմանը և պատրաստմանը, որպեսզի այդպիսի փաստաթղթերը պատրաստվեն, բանակցվեն և կնքվեն ԵԱՁԲ-ի և Տեղաբաշխողի համար ընդունելի ձևով և բովանդակությամբ, (գ) աջակցում է գործարքի շուկայավարման (մարքեթինգի) գործընթացին, (դ) աջակցում է ԵԱՁԲ-ին «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի կողմից կազմակերպվող կարգավորվող շուկայում Պարտատոմսերի ցուցակման հարցում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ինչպես նաև «Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի կանոնների և կանոնակարգերի համաձայն, (ե) կատարում է այլ գործողություններ (մատուցում է այլ ծառայություններ), որոնք կարող են նախատեսվել փոխադարձ գրավոր համաձայնությամբ՝ Տեղաբաշխողի և ԵԱՁԲ-ի միջև կնքվող առանձին համաձայնություններով:	executed in form and substance satisfactory to EDB and the Underwriter; (c) assists in the marketing process for the transaction; (d) assists the EDB in listing the Bonds on the regulated market operated by Armenia Securities Exchange OJSC in accordance with the legislation of the Republic of Armenia, as well as the rules and regulations of Armenia Securities Exchange OJSC; (e) performs such other actions (provides such other services) as may be mutually agreed in a written form by signing a separate engagement agreement between the Underwriter and EDB.
2) Վճարային Գործակալը պատասխանատու է Պահառուի կողմից վարվող ռեեստրում գրանցված Պարտատոմսերի Սեփականատերերին Արժեկտրոնի Վճարման Ամսաթվ(եր)ին վճարումներ կատարելու և/կամ Մարման Ամսաթվին Պարտատոմսերի մարման համար՝ համաձայն Բանկի և Վճարային Գործակալի միջև առկա և (կամ) ապագա գրավոր համաձայնությունների:	2) The Paying Agent shall be responsible for making due payments at Coupon Payment Date/s and/or redeeming/repaying the Bonds at the Maturity Date to the Bondholders registered with the registry maintained by the Custodian, in accordance with the existing and (or) further written arrangements between the Bank and the Paying Agent.
2.5. Ծուկա ստեղծող	**2.5. Market Maker**
ԵԱՁԲ-ն շուկայի ստեղծման ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքելու «Արդշինբանկ» ՓԲԸ-ի հետ՝ ապահովելու Պարտատոմսերի իրացվելիությունը՝	EDB will enter into an agreement for the provision of market making services with Ardshinbank CJSC to ensure the liquidity of the Bonds in accordance with the rules of Armenia Securities Exchange OJSC.

«Հայաստանի ֆոնդային բորսա» ԲԲԸ-ի կանոններին համապատասխան: Պարտատոմսերի բարձր իրացվելիությունն ապահովելու համար ԵԱԶԲ-ն կարող է ներգրավել լրացուցիչ շուկա ստեղծող:	For the purposes of securing high liquidity of the Bonds EDB may engage additional market maker.
2.6. Խախտման դեպքեր	**2.6. Events of Default**
Եթե տեղի է ունենում հետևյալ իրադարձություններից որևէ մեկը (այսուհետ՝ յուրաքանչյուրը «Խախտման Դեպք»).	If any of the following events (each, an "Event of Default") occurs:
(ա) Բանկը չի վճարում Պարտատոմսերից որևէ մեկի մայր գումարը կամ չի վճարում որևէ տոկոս կամ հավելյալ գումար (եթե կիրառելի է) Պարտատոմսերից որևէ մեկի նկատմամբ, երբ այն դարձել է վճարման ենթակա, և նման խախտումը շարունակվում է 14 (տասնչորս) օր; կամ	(a) the Bank fails to pay the principal of any of the Bonds or fails to pay any interest or additional amounts (if applicable) with respect to any of the Bonds when the same becomes due and payable and such default continues for a period of 14 (fourteen) days; or
(բ) Բանկը կատարել է վերևի (ա) կետով նախատեսվածից այլ պարտավորության խախտում կամ որևէ այլ կերպ խախտել է Պարտատոմսերին առնչվող որևէ հանձնառություն, պարտավորություն կամ պայմանագիր, և նման խախտումը չի վերացվել 30 (երեսուն) օրվա ընթացքում՝ այն պահից, երբ Բանկին տվյալ պահին չմարված Պարտատոմսերի Սեփականատիրոջ կողմից գրավոր ծանուցում է տրվել այդպիսի խախտման մասին, և նման իրադարձությունը կարող է էական վնաս հասցնել Պարտատոմսերի Սեփականատերերի շահերին,	(b) the Bank is in default in the performance other than as prescribed in point (a) above, or is otherwise in breach of any covenant, obligation, undertaking or other agreement in relation to the Bonds and such default or breach is not remedied within 30 (thirty) days following the date when a written notice on such default or breach has been given to the Bank by any Bondholder then outstanding, which event is materially prejudicial to the interests of the Bondholders;
Պահառուի կողմից վարվող ռեեստրում գրանցված ցանկացած Պարտատոմսերի	then any Bondholder registered with the registry maintained by the Custodian may give

Սեփականատեր կարող է գրավոր ծանուցել Բանկին (վերջինիս գլխամասային գրասենյակ) այն մասին, որ այդ Պարտատոմսերի Սեփականատերը որոշում է հայտարարել, որ իրեն պատկանող բոլոր Պարտատոմսերի (որոնց սերիական համարները և անվանական արժեքները պետք է նշվեն նման ծանուցման մեջ) մայր գումարը դարձել է վճարման ենթակա, և 30 (երեսուն) օր հետո այն պահից, երբ այդպիսի ծանուցումը հանձնվել է Բանկին, այդպիսի Պարտատոմսերի մայր գումարը պետք է դառնա վճարման ենթակա բոլոր հաշվեգրված տոկոսների հետ միասին՝ բացառությամբ այն դեպքերի, երբ մինչ այդ այդ պահը խախտումը շտկվել է:	a written notice to the Bank (to its headquarters) that such Bondholder elects to declare the principal of all Bonds held by it (the serial numbers and denominations of which shall be set forth in such notice) to be due and payable, and 30 (thirty) days after the date on which such notice shall be so delivered to the Bank, the principal of such Bonds shall become due and payable, together with all accrued interest thereon, unless prior to that time such default shall have been cured.